

ՇՈՂԻԿ

2017 ³
SHOGHIK



ՈՒԶՈՒՄ

ԵՄ ՆՄԱՆՎԵԼ ՆՐԱՆ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ, ՀԱՅՈՑ ԵՐԿԻՐ, ՀԱՅՈՑ ՀՈՂ

Սիլվա Կապուտիկյան

Հայո՛ց աշխարհ, հայո՛ց երկիր, հայո՛ց հող,
Լայն աշխարհում քո գրկի մե՛ջ ապրեմ թող:

Դու ժայռակուռ մի ամրոց ես հնավանդ,
Աշտարակներդ՝ Արագած ու Արարատ:

Թող ես լինեմ աշտարակիդ աղավնին,
Շուքդ մնա իմ ապավեն հովանին:

Ո՛ր էլ թռչեմ, ինչ աշխա՛ր էլ թափառեմ,
Նորից ե՛տ գամ, քո տանիքու՛մ ծվարեմ:

Ու թե մեռնեմ, քո գրկի մե՛ջ մեռնեմ թող,
Հայո՛ց աշխարհ, հայո՛ց երկիր, հայո՛ց հող:





**ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԵՍ**



Հովհաննես Այվազովսկի. «Ջրերի վրա քայլող մարդը»

Եվ տեսավ նրանց, որ հողմակոծ էին լինում թիավարելիս, որովհետև քամին նրանց հակառակ կողմից էր. գիշերվա ուշ ժամին Նա գալիս էր նրանց մոտ՝ ծովի վրա քայլելով, և ուզում էր նրանցից առաջ անցնել գնալ: Երբ նրանք տեսան, որ քայլում է ծովի վրա, կարծեցին, թե մի ուրվական է, և աղաղակ բարձրացրին, որովհետև ամենքը տեսան Նրան և խոռովեցին: Եվ Նա իսկույն խոսեց նրանց հետ ու ասաց. «Քաջալերվեցե՛ք, ե՛ս եմ, մի՛ վախեցե՛ք»: Եվ Նա նավակ բարձրացավ նրանց մոտ, և քամին դադարեց...:

Մարկոս 6. 48-51

**Տիմնադիր՝
Նայաստրանյայց Ավերարանական Եկեղեցի**

Խմբագրական խորհուրդ՝
Վեր. Ալբերտ Փայտյան
Էմիլյա Օհանյան
Լյուսյա Առաքելյան

Համակարգչային աշխ.՝
Արևիկ Հակոբյանի

Նկարիչ, գեղ. խմբագիր՝
Էմիլյա Օհանյան

Editorial committee:
Rev. Albert Paytayan
Emilya Ohanyan
Lyusya Arakelyan

Computer layout:
Arevik Hakobyan

Artist:
Emilya Ohanyan

Գրանցման վկայական՝
01Մ 000035
Նրատրամադրության ԺԶ տարի
ՀԱԸ
ՀՀ, 0019, Երևան,
Բաղրամյան 18
AMAA
Baghramyan 18, 0019
Yerevan, Armenia
Տեղ./Tel. (+37410) 54 35 52
54 35 76
E-mail: eca@arminco.com
Ֆաքս/Fax (+37410) 54 75 69

Տպագրվել է «Զանգակ-97» ՍՊԸ-ի տպարանում

Տպարանակը՝ 4000
Տարածվում է անվճար

«Ծողիկ»-ից մեջբերումներ անելու
դեպքում հղումը պարտադիր է:



Կարինե Մկրտչյան, 8տ.



Մարինե Գևորգյան, 11տ.



Կարինե Մկրտչյան, 8տ.



Օլյաննա Գալստյան, 11տ.



Էլյա Սահինյան, 7տ.



Անգել Սահինյան, 7տ.

**ՆԿԱՐՈՒՄ ԵՆ
ԵՐԵՎԱՆ-ՔԱՂԱՔԻ
ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ
ԹԱՂԱՄԱՍԻ
ՀԱԵ-Ի ՍԱՆԵՐԸ**



Արեգա Դոմանյան, 13տ.



Մարինե Գևորգյան, 12տ.



Գայանե Մկրտչյան, 14տ.



Փաննա Գրիգորյան, 6տ.



Վաչե Գալոյան, 7տ.



Սիրելի՛ երեխաներ, ամառային այս շոգ օրերին բոլորդ էլ անշուշտ եկել եք ճամբար՝ հետաքրքիր օրեր անցկացնելու, նոր ընկերներ ու բարեկամներ ձեռք բերելու և Աստվածաշունչ մատյանի հավիտենական և անփոփոխ ճշմարտությունների հետ ծանոթանալու ակնկալիքով: Աշխատանքի, ուսման և առօրյա հոգսերի հորձանուտում հաճախ մոռանում ենք մտորել մեր շրջապատի, հարազատների և բարեկամների մասին, մտածել, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում: Հաճախ մոռանում ենք նաև ձիշտ արժևորել մեր շրջապատը և երբեմն չենք գիտակցում, որ բնության մաս լինելով՝ մենք նախ և առաջ Աստծու զավակներն ենք: *«Երկինքը պատմում է Աստծու փառքը, և երկնքի հաստատությունը հայտնում է Նրա ձեռքի գործերը» (Սաղմոս 18. 2):*

Ճամբարային օրերը բովանդակալից անցկացնելու համար մենք ձեզ համար պատրաստել ենք դասաշար, որի նպատակն է ցույց տալ, որ Աստված ձեզ հրավիրել է դառնալու Իր զավակը և ուզում է, որ Իր նման լինեք, այն է՝ արդար, օգնող, ներող, սիրող և, վերջապես, պատրաստակամ՝ Աստծու խոսքը վստահորեն տարածելու: Համոզված ենք՝ ձանաչելով Աստծուն՝ դուք կհասկանաք, թե ինչ է մեղքը և ինչպես ազատվել դրանից, ու Աստծու հետ ապրելու որոշում կկայացնեք: Կգիտակցեք նաև, որ Աստված միշտ ձեզ հետ է թե՛ դժվարության և թե՛ ուրախության պահերին:

Սիրելի՛ բարեկամ, նմանվի՛ր Հիսուսին և դարձիր արդար, օգնող, ներող և պատրաստակամ՝ մարդկանց պատմելու Աստծու սիրո մասին: Ի դեպ, «Շողիկ»-ի այս համարի մշակույթի բաժնում այլ նյութերի հետ դուք կծանոթանաք նաև հանձարեղ հայ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու աշխատանքներին:

Կարծում ենք՝ «Շողիկ»-ի մյուս համարների նման ամառային ճամբարի այս համարը ևս լինելու է ոչ միայն սպասված, այլև շատ հաճելի ու հարազատ մի գրուցակից:

Բոլորիդ մաղթում ենք բարի հանգիստ, ուրախ օրեր, նոր ծանոթություններ և զալիք սեպտեմբերը սրտի տրոփյունով սպասելու ցանկություն: *«Եվ ամենը, ինչ որ աղոթքում հավատալով ինդրեք, կատանաք» (Մատթեոս 21. 22):*



«Քանի որ արդար Տերը
արդարություն է սիրում,
Նրա երեսը շիտակին է
նայում»: Սաղմ. 11. 7

ԱՐԴԱՐ ՈՐՈՇՈՒՄ

(Արևելյան պատմվածք)

Արևելյան մի քաղաքում մի վաճառական թոփերով մետաքս է հանձնում մի ուղտապանի, որպեսզի իր ապրած քաղաքը տանի՝ պատվիրելով, որ այնտեղ հասնելուն պես սպասի, որ ապրանքն իրեն հանձնի: Բայց վաճառականը, հիվանդանալով, ստիպված է լինում մնալ, հանգստանալ ու բուժվել և ուշանում է պայմանավորված ժամից: Ուղտապանը, տեղ հասնելով, երբ տեսնում է, որ վաճառականը ուշանում է և չի երևում, ծախում է մետաքսը և դրամը յուրացնում՝ հրաժարվելով նաև ուղտապանությունից:

Որոշ ժամանակ անց վաճառականը առողջանում է ու վերադառնում է իր քաղաք: Ուղտապանին երկար փնտրելուց հետո վերջապես գտնում է ու նրանից պահանջում իր ապրանքը՝ թոփերով մետաքսը:

Խաբեքա ուղտապանը ուրանում է ամեն բան՝ ասելով անգամ, թե ինքը երբեք ուղտապան չի եղել:

Գործը հասնում է դատավորին: Դատավորը համոզված էր, որ վաճառականը ճիշտ է ասում, բայց ոչ մի ապացույց չունե՞ր՝ որևէ որոշում կայացնելու համար: Երբ մարդիկ պատրաստվում են դատարանից հեռանալ, հնարամիտ դատավորը կանչում է.

— Ուղտապա՛ն, ուղտապա՛ն...

Այդ պահին ուղտապանը, մոռանալով, որ իր արհեստն ընդամենը մի քանի րոպե առաջ ուրացել էր, բնազդաբար հետ է դառնում: Դատավորը, այս տեսնելով, անմիջապես վճիռ է կայացնում, որ խաբեքա ուղտապանը վճարի մետաքսի գինը, նաև կարգադրում է, որ մի լավ փայտածեծ տան՝ իբրև պատիժ խաբեքայության ու ստախոսության համար:

Ահա այսպիսին պիտի լինի բոլոր խաբեքաների ու ստախոսների վերջը:

«Ինձ դարձեք, որ փրկվեք, որովհետև ես եմ Աստված, և ուրիշը չկա»:

Եսայի 45. 22

ՄԱՐԴՆ ՈՒ ԾԱՌԵՐԸ

Մխիթար Գոշ

Մի չքավոր մարդ ձմռանը գնաց այգի՝ պտուղ քաղելու: Եվ տեսնելով, որ ծառերը փայտացած են, սկսեց թշնամանալ, տրտնջալ, հարվածել ու ասել նրանց.


— Ինչո՞ւ պտուղ չունեք, որ ուտեմ ու կշտանամ,— ու սկսեց ավելի չարանալ:

Եվ ծառերից մեկը քաղցրությամբ ու համոզող խոսքով ասաց.

— Մի՛ տրտմիր, ո՛վ մարդ, և իզուր մի՛ բամբասիր, որովհետև սխալվում ես: Թեպետ կարիքավոր ես, բայց ինչո՞ւ չգիտես, որ ձմռանը հանգստանում ենք և զորացնում մեր արմատները, որպեսզի կարողանանք գարնանը ծաղկել, ամռանը սնունդ տալ պտղին և աշնանը հասնել ու կերակրել: Ինչո՞ւ չեկար այն ժամանակ, երբ մարդ, անասուն ու գազան վայելում էին մեր պտուղները: Այժմ գնա և վերադառնալով ճիշտ ժամանակին՝ կեր որչափ կկամենաս:

Եվ գնաց մարդը այդ խոսքի հույսով:

Առակիս ծառը խրատում է հյուրերին ու աղքատներին, որ հարմար պահին գնան մեծարանք փնտրելու. հյուրերը ուտելու և հանգստանալու, իսկ աղքատները՝ կարիքները բավարարելու: Եվ ամեն ժամ հյուրընկալողները պատրաստ չեն ընդունելու, կամ բարեգործները՝ ողորմություն տալու: Իսկ ամբաստանելու և տրտնջալու դեպքում չպետք է չարանալ, այլ անհրաժեշտ է պատասխանել քաղցրությամբ, բացատրել պատրաստ չլինելու պատճառները:



Սահակյան Զավեն,
5 տարեկան,
ք. Սպիտակ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ



Համբարձումը քրիստոնեական տոն է, որը սահմանվել է ի հիշատակ Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերի: Հարությունից հետո Հիսուս Քրիստոսը քառասուն օրերի ընթացքում հաճախ հայտնվում էր աշակերտներին և նրանց հետ խոսում Աստծու արքայության մասին: Եվ ահա մի անգամ իր աշակերտների հետ Հիսուսը բարձրացավ Հերմոնի բարձր լեռը: Այնտեղ նրանք միասին սկսեցին աղոթել: Տերը վեր բարձրացրեց ձեռքերը, օրհնեց աշակերտներին, ապա հանկարծ նրանց աչքի առջև կտրվեց գետնից ու բարձրացավ երկինք: Սպիտակ ամպը եկավ ու ծածկեց Նրան, իսկ աշակերտները կանգնել ու նայում էին ամպին, որ անընդհատ վեր էր բարձրանում, մինչև անհետացավ երկնքում:

Եվ մինչ իրենց աչքերը հառած նայում էին Նրա՝ երկինք գնալուն, ահա նրանց երևացին սպիտակ զգեստների մեջ երկու մարդ, որոնք և ասացին. «Ո՛վ գալիլիացիներ, ի՞նչ եք կանգնել ու նայում երկնքին: Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք Նրա՝ երկինք գնալը»:


Աշակերտները շատ ուրախացան և վերադարձան Երուսաղեմ: Նրանք գիտեին, որ Տերը նրանց համար երկնքում տեղ կպատրաստի, և իրենք մշտապես սիրելի Փրկչի հետ կլինեն:

Մենք այսօր ապրում ենք հույսով, որ Հիսուսը պիտի վերադառնա՝ իր արդար և հավիտենական թագավորությունը հաստատելու, և այնտեղ Նրա հետ բոլոր Նրան հավատացողները պիտի ապրեն մշտական ուրախության մեջ (Գործք Առաքելոց 1. 8-12):

Քրիստոսի Համբարձման տոնն ուղեկցվում է նաև ժողովրդական հանդիսություններով՝ երգով, պարով, խաղերով: Համբարձման տոնը ժողովրդին հայտնի է նաև «Վիճակ» կամ «Ջանգյուլում» անուններով: Այդ օրը ջրով լի կուժերի մեջ զցում են ծաղիկների տերևներ և աղջիկներին պատկանող զանազան իրեր: Այնուհետև դռահաս մի աղջկա հագցնում են հարսի զգեստ, վերցնում կժերը, ծաղիկները և շրջում տնետուն: Այս ամենն ուղեկցվում է երգով, կատակներով և դրամահավաքով: Հետո սկսվում է վիճակահանությունը՝ խրատներով և բարեմաղթանքներով:



«Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ էմ այս եղբայրներից
ամենափոքրին արեցիք՝ էնձ արեցիք»: Մատթ. 25. 40



ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Օգնություն նշանակում է օգնել, որևէ բանով օժանդակել, գորավիզ լինել, սատարել, դրամական կամ նյութական աջակցություն ցուցաբերել, նպաստել: Օգնությունը կարող է լինել ֆիզիկական, նյութական, բարոյական, բժշկական, ռազմական և այլն: Մենք պետք է շահենք այն մարդկանց համակրանքը, ում ցանկանում ենք օգնել, այլ ոչ թե նրանց, ումից օգուտ ենք ակնկալում: Թե՛ տխրության և թե՛ ուրախության պահերին մարդու հոգին ջերմությամբ է լցվում, երբ ծանոթ կամ անծանոթ մեկը փորձում է օգտակար լինել, սատար կանգնել, օգնության ձեռք մեկնել իրեն, հարևանին, բարեկամին, ազգականին, ընկերոջը կամ որևէ անծանոթի: Օրինակ՝ լեռնային գյուղերում ձմեռվա հացը թխելիս կանայք հավաքվում են և միասին, ձեռք-ձեռքի տված, թխում են այդ ընտանիքի հացը կամ տուն կառուցելիս, պատ շարելիս, տանիք դնելիս տղամարդիկ սիրով և ուրախությամբ հավաքվում են և յուրաքանչյուրն իր գիտելիքներին և կարողություններին համապատասխան գործ է ընտրում և օգնում: Օգնության վառ օրինակ է նաև «Բարի սամարացին», որը նկարագրված է Նոր Կտակարանում:

Օգնության չափը և ձևն ամեն մարդ ինքն է որոշում՝ ելնելով իր կարողություններից, ցանկություններից և հնարավորություններից: Երբ հարուստը և աղքատը, ուժեղը և տկարը միանման չափի օգնություն են ցուցաբերում, ապա առավել մեծ է աղքատի ու տկարի օգնությունը:

*Գրի՛ր, թե դու ինչպես ես
օգնում հայրիկիդ, մայրիկիդ,
եղբորդ, քրոջդ,
ընկերոջդ, բարեկամիդ
և վերջապես անծանոթին...*



1. Առավոտյան քայլեր կատարյալ միայնության մեջ, նայե՛ք արևին, աղոթք արեք և մտածեք այն մասին, թե ինչն է ձեզ երջանկացնում:

2. Փորձեք օգտագործել այն նոր բառերը, որոնք սովորել եք այս տարվա ընթացքում: Որքան շատ կարողանաք արտահայտվել, այնքան հետաքրքիր կդառնան ձեր մտքերը, իսկ որքան շատ մտքեր ունենաք, այնքան ավելի ազատ կդառնաք:

3. Որքան հնարավոր է շա՛տ կարդացեք գեղարվեստական գրքեր և Աստվածաշունչ: Բայց կարդացեք ոչ թե նրա համար, որ պարտադրված եք, այլ որպեսզի ընդլայնեք ձեր երազանքների աշխարհը: Իսկ Աստվածաշունչը կարդալիս հիշեք. «Ես ազատությամբ և վստահությամբ կարող եմ մոտենալ Աստծուն» (Եփ. 3.12):

4. Փնտրեք նոր ընկերներ, որոնք «կհարստացնեն» ձեր միտքը, կհասկանան ու կգնահատեն ձեզ այնպիսին, ինչպիսին կաք:

5. Եթե տխրություն կամ վախ եք զգում, մի՛ անհանգստացեք, այլ մտածեք՝ «Ես Աստծու տղան կամ աղջիկն եմ» (Հոովմ. 8. 14): Անձնական օրագիր պահեք և նրանում գրի առեք այն ամենը, ինչ զգում եք: Ցանկության դեպքում կարող եք կարդալ մտերիմների հետ:

6. Գոնե մեկ անգամ արևածագ դիմավորեք: Լուռ կանգնեք, խորը շնչեք, փակեք աչքերը և երախտագիտության զգացում կունենաք առ Աստված:

7. Ավելի շա՛տ սպորտով զբաղվեք:

8. Վերընթերցեք դասերի ընթացքում կարդացած գրքերի մասին գրառումները, համեմատե՛ք դրանք այն ամենի հետ, ինչ կատարվում է ձեր կյանքում:

9. Մարդկանց հետ եղեք սիրալիր ու բարի: Երբեք մի՛ օգտագործեք վատ բառեր:

10. Դիտեք լավ ֆիլմեր՝ խորիմաստ և աստվածաշնչյան թեմաներով: Զարգացրեք ձեր մեջ հավատքը, հայրենասիրությունը, երազելու և զգալու կարողությունները:

11. Արեք այն ամենը, ինչ կախված է ձեզնից, որպեսզի չհանձնվեք ձեր երազանքի ճանապարհին:

12. «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց» (Մատթևոս 7. 12):



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ 200



Ըստ Թեոդոսիայի հայկական եկեղեցու ծննդյան և մկրտության մատյանի՝ աշխարհահռչակ հայազգի հանձարեղ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին ծնվել է 1817 թ. հուլիսի 17-ին, Թեոդոսիայում: Այվազովսկու նախնիները XVII-րդ դարում գաղթել են Արևմտյան Հայաստանից: Հովհաննես

Այվազովսկու նկարչական ու երաժշտական ձիրքերն ի հայտ են եկել դեռ մանկական տարիներից (նա ինքնուրույն սովորել է ջութակ նվագել): Ասում են՝ ութամյա տղան ածուխի կտորով նկարներ է արել Թեոդոսիայի հայկական թաղամասի տների ձերմակ պատերին, որոնք տեսնելով և տղայի շնորհը գնահատելով՝ քաղաքապետը աջակցել է տաղանդավոր տղային ընդունվելու գիմնազիա, իսկ հետո, Սանկտ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիա, որն ավարտել է 1837 թ. ոսկե մեդալով: 1840-ին ակադեմիան նրան գործուղել է արտասահման՝ կատարելագործվելու. նա եղել է Իտալիայում (նաև Սբ Ղազար կղզում), Իսպանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Հոլանդիայում, մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների՝ արժանանալով համընդհանուր ճանաչման, որտեղից վերադարձել է արդեն որպես ճանաչված վարպետ, Հռոմի, Փարիզի ու Ամստերդամի գեղարվեստի ակադեմիաների ակադեմիկոս: Վերադարձից հետո ստացել է Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոսի կոչում և նշանակվել Ծովային գլխավոր շտաբի գեղանկարիչ: Պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով, ստացել դերծովակալի կոչում: Ի դեպ, նա մի քանի պատկեր է նկարել նաև Օսմանյան սուլթանի համար, որոնք ներկայումս թուրքական թանգարաններում են: Թուրքական սուլթանը շքանշանով պարգևատրել է Այվազովսկուն, սակայն երբ Թուրքիայում 1890-ական թթ. սկսվել են հայերի կոտորածները, Այվազովսկին թուրքական շքանշանը կապել է իր շան վզին, իսկ հետո շարտել ծովը:



Արևամուտը ծովում

1845-ին Այվազովսկին հեռացել է Ռուսաստանի մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգից՝ մշտական բնակություն հաստատելով Թեոդոսիայում: Այստեղ նա ակտիվորեն մասնակցել է հայրենի քաղաքի բարեկարգմանը, ամեն կերպ աջակցել նրա ծաղկմանն ու բարգավաճմանը, բացել է

արվեստների դպրոց, պատկերասրահ, կառուցել գրադարան, համերգային դահլիճ, հնությունների թանգարանի նոր շենք, 1892 թ. դարձել Թեոդոսիա-Ջանկոյ երկաթգծի շինարարության նախաձեռնողը: Նրա անունով Թեոդոսիայում կոչվել է փողոց, զբոսայգի և մոտակա բլուրներից մեկը:

Այվազովսկին մեծ ներդրում է ունեցել նաև հայ մշակութային կյանքում: Գեղանկարչության մեջ առաջին անգամ նա է պատկերել հայկական բնությունը, Արարատն ու Արարատյան հովիտը, Սևանա լիճը, արտացոլել հայրենի բնության գեղեցկությունները: Հայաստանի նկատմամբ Այվազովսկու տածած անսահման սերը արտահայտվել է բազմաթիվ կտավներում, որոնց վրա նա ստորագրել է հայերեն : Նա ապաստան է տվել և նյութապես օգնել կոտորածից Ղրիմ փախած հայ գաղթականներին, եղել Ղրիմի հայկական գաղթօջախի հովանավորը: Նա աշխարհին ժառանգություն է թողել 6000-ից ավելի ստեղծագործություն: Ի դեպ, աշխատել է շատ արագ, տեսողական վիթխարի հիշողությամբ: Պատկերել է ծովը՝ օրվա տարբեր ժամերին, տարվա բոլոր



Պետրոս I-ի այցը Նևա



Ծիածան, 1873 թ.

եղանակներին: Խորապես զգացել և վերարտադրել է ծովային տարերքի անընդգրկելի վեհությունը, հրավառ արևածագն ու արևամուտը, կեսօրյա անդորրը, ալիքների ռիթմն ու նրանց վրա խայտացող լուսնի լույսը: Բնությունն արտացոլել է մշտական շարժման և փոփոխության մեջ:

Այվագովսկին մահացել է 82 տարեկան հասակում, 1900 թ. մայիսի 2-ին՝ անավարտ թողնելով «Թուրքական նավի պայթյունը» կտավը: Իր կտակի համաձայն՝ նրան թաղել են Թեոդոսիայի Սուրբ Սարգիս հայկական եկեղեցու բակում: Շիրմաքարին գրաբար փորագրված են պատմահայր Մովսես Խորենացու խոսքերը. «Մահկանացու ծնեալ անմահ զիրն յիշատակ եթող»:



Իններորդ ալիքը



ԱՊՐԵՑ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ՇԱՌ-ԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ Սատա Քորնինգ

Կենտրոնական Տորոնտոյից հյուսիս՝ գեղեցիկ անուններ կրող Փարքվուդ և Փլեզընթ Վյու թաղամասերի միջև, Օնտարիո մայրուղու հարևանությամբ ընկած են Սք. Մարիամ Աստվածածին հայկական եկեղեցին, Տորոնտոյի «Հայ կեդրոնը» և Սատա Քորնինգի անվան Ցեղասպանագիտության կրթական կենտրոնը: Վերջինս նվիրված է ցեղասպանագիտության և մարդու իրավունքների ոլորտի հետազոտություններին ու կրթությանը, կոչված է ի պատիվ կանադացի գթության քույր Սատա Քորնինգի, ով գերմարդկային ջանքերով 1922 թ. կործանումից փրկեց Ջմյունհայի (ներկայիս Թուրքիայի Իզմիր քաղաքը) 5000 հայ որբերի: Սա, լինելով Քորնինգի առաքելություններից կարևորագույնը, այնուամենայնիվ, նրա միակ մարդասիրական նվաճումը չէր:

Ինչպես փորագրված է նրա տապանաքարին՝ «Ապրեց ուրիշներին ծառայելու համար»:

Քորնինգը ծնվել է 1872 թ. հարավ-արևելյան Կանադայում, բուժքրոջ դասընթացներ է անցել ԱՄՆ-ում, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին համալրել է ԱՄՆ Կարմիր Խաչի շարքերը: Հայոց ցեղասպանությանն ու դրա արձագանքներին ծանոթացել է կանադական մամուլից: Ինչպես հետագայում նշել է Քորնինգի հեռավոր ազգականներից մեկը՝ «նրա կարեկցանքը թելադրված էր գործնական մոտեցմամբ»:

1921 թվականին Քորնինգը ժամանում է Թուրքիա՝ գլխավորելու Արարատ լեռան ստորոտում գտնվող որբանոցներից մեկը: Հաջորդ տարի քեմալական բանակը գրավում է Ջմյունհիս նավահանգիստը՝ խուճապի մատնելով հույն

քնակչությանն ու այնտեղ ապաստանած հայ գաղթականներին: Քորնինգն անդամագրվում է Մերձավոր Արևելքի Նպաստամատույցին (Near East Relief) և Կոստանդնուպոլսում բարձրանում դեպի պաշարված քաղաքն ուղևորվող ամերիկյան ռազմանավերից մեկը:

Տեղ հասնելով՝ նա հիվանդներին ու վիրավորներին խնամելու նպատակով երկու համակիրների հետ միասին հիմնում է հիվանդանոց, որն օսմանյան գորքերը շատ արագ փակել են տալիս: Երկրորդ հիվանդանոցն արժանանում է միևնույն ձևակառուցման՝ ավելի ծանր սպառնալիքով: «Դրանից հետո քաղաքը կողոպուտի ենթարկվեց, իսկ հետո սկսեցին հրդեհել այն», - տարիներ անց գրել է Քորնինգը: Հազարավոր մարդիկ զոհ գնացին հրդեհին, իսկ բարեգործական միությունները, այդ թվում՝ Ամերիկյան օգնության կոմիտեն, կազմակերպում են մարդկանց տարահանումը ծովով: Քորնինգը վազում է դեպի ամերիկյան որբանոցներից մեկը և գերմարդկային ջանքերով հավաքում երեխաներին՝ տանելով նավամատույց: Մահվան, հրի ու խառնաշփոթի հորձանուտում փրկվում է 5000 երեխա:

Ամերիկյան ռազմանավերով Քորնինգն այս երեխաների հետ ուղևորվում է Հունաստան, որտեղ հիմնում է որբանոց և նվիրվում նրանց կրթությանն ու դաստիարակությանը: Մեզ հասել է մի լուսանկար, որտեղ Հունաստանի բլուրներից մեկի լանջին երեխաները խումբ են կազմել արտասանելու Առ Կորնթացիս Բ, 1. 8, որում ասվում է. «Քանզի ոչ կամիմ տգէտ լինել ձեզ եղբարք՝ վասն նեղութեան մերոյ եղելոյ յԱսիա. զի առաւել քան զկար մեր ծանրացաք, մինչեւ անյոյս լինելոյ մեզ եւ ի կենաց» (Քանզի չեմ ցանկանում, որ դուք, եղբայրներ, անտեղյակ լինեք Ասիայում մեր կրած նեղություններից. տառապեցինք մեր կարողությունից առավել, մինչև կորցրինք ապրելու հույսն անգամ):

1923 թ. Հունաստանի արքա Գեորգիոս Երկրորդը Սառա Քորնինգին հրավիրում է պալատ՝ պարզևատրելու պետության բարձրագույն շքանշանով՝ Փրկչի արծաթե խաչով: Հաջորդ տարի Սառան վերադառնում է Թուրքիա և մինչև թոշակի անցնելը տրվում երեխաներին կրթելու և դաստիարակելու գործին: Հանգստի անցնելով՝ վերադառնում է Կանադայի իր հայրական տունը, որտեղ էլ ապրում է մինչև 97 տարեկանը՝ մահանալով 1969 թ.:

Սառա Քորնինգի ամենատարածված լուսանկարներից մեկը պատկերում է մաքրակենցաղ բուժքրոջ հագուստով և ձևավոր գլխադիրով մի գեղեցիկ կնոջ՝ թեթև ժպիտը դեմքին: Հանդարտ և կարեկցող հայացքի խորքում կարելի է նշմարել նրա երկաթյա կամքի փայլը:



«Եվ իրար հետ քա՛ղցր եղէք, գրած՝
իրար ներելով, ինչպես որ Աստված
Քրիստոսով ձեզ ներեց»: Եփես. 4. 32

«Տե՛ր, քանի՛ անգամ ներեմ եղբորս...»:
Մատթեոս 18. 21-22

ՄԵՆԷ ԲՈՒՈՐՍ ԷԼ ԱՌՆՉՎԵԼ ԵՆԷ ԱՅՍ ՀԱՐՅԻՆ.

Եթե այս հարցն ուղղեինք իրեա դպիրի կամ փարիսեցու, նա կասեր, որ միայն երեք անգամ պետք է ներել մարդուն, ով հանցանք է գործել քո հանդեպ: Դրանից հետո այլևս պարտավոր չես ներելու:

Պետրոս առաքյալը կարծեց, թե ինքը շատ բարի է և Հիսուսին հարցրեց. «...ներեմ նրան մինչև յո՞թն անգամ»: Հիսուսը նրան ասաց. «Քեզ չեմ ասում մինչև յոթն անգամ, այլ մինչև յոթանասուն անգամ յոթը», այսինքն՝ անթիվ:

Հիշի՛ր՝ ներելն ազատության ճանապարհ է:


Մարդուն ներելն առավել իմաստություն և հոգու կորով է պահանջում, քան պատժելը: Ներելն ուժեղ մարդու հատկանիշ է: Թույլ, ստոր և շահամոլ մարդը չի կարող ներել:

Հետաքրքիր է՝ կյանքում ինչքան ներում ենք ուրիշներին, այնքան ավելի մենք ներման կարիք ունենք: Ամենատարրական քաղաքավարությունը մեզնից պահանջում է մեր կամա-ակամա գործած սխալների համար ներողություն խնդրել դիմացինից: Ամենապարզ հարաբերություններում անգամ հաճելի է, երբ քո ոչ ճիշտ արարքի համար ներողություն ես խնդրում:

Ի՞նչն է քեզ արգելում, որ ներես ընտանիքիդ անդամին, ընկերոջդ կամ բարեկամիդ: Մի պահ մտածիր, թե Աստված որքան է ներել քեզ, և այդ ժամանակ դու էլ կկարողանաս ներել նրան: Եթե մտածում ես, թե բարեկամդ արժանի չէ շնորհի, ողորմության և ներման, ապա խորհիր՝ արդյոք դու արժանի՞ էիր Աստծու շնորհին, ողորմությանը և ներմանը: Աստված հավատացյալի բոլոր մեղքերը ներել է, ուրեմն՝ հավատացյալն իրավունք չունի չներելու ուրիշին:



«Մեզ համար արդարությունն
ընտրենք, մեր մեջ իմանանք,
թե ի՞նչն է բարի»: **Հոբ 34. 4**





**ԵԹԵ ՉԼԻՆԵՐ ՆԱ,
ԳՈՒՑԵ ՀԱՅԱՍՏԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՅՍՕՐ
ԳՈՅՈՒԹՅՈՒՆ
ՉՈՒՆԵՆԱՐ**

Փորձառու, բայց անվճռական գեներալ Թովմաս Նազարբեկյանը կորցրել էր հաղթանակի հույսը և Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդից պահանջում էր շուտափույթ հաշտություն կնքել թուրքերի հետ, բայց նրանք շարունակում էին առաջխաղացումը: Ուստի, նրա տեղակալ գնդապետ Բեյ-Մամիկոնյանը Դիլիջանում սպաների խորհրդակցություն է հրավիրում և ներկայացնում է Թ. Նազարբեկյանի կարգադրությունը, այն է՝ զորքի մի մասը ցրել, մյուս մասը վերածել ոչ մեծ պարտիզանական ջոկատների, իսկ հրետանին տանել Սևան ու թաղել Ծովագյուղ (մինչև 1935-ը՝ Չիբուխլու) գյուղի մոտ: Բարեբախտաբար խորհրդակցությանը ներկա սպաներից մեկը՝ կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը, բարկացած ոտքի է կանգնում և հայտարարում է. «Ես չեմ հնազանդվի այդ որոշմանը: Դա դավաճանություն է: Ո՛չ որ իրավունք չունի այդպես վարվելու Հայոց ձակատագրի հետ: Ես իմ թնդանոթներով այս իսկ րոպեին կմեկնեմ ձակատ՝ մեռնելու: Ով տղամարդ է և հայի արյուն ունի իր երակներում, թող իմ հետևից գա»:

Նրան է միանում վիրավոր պորուչիկ (Ցարական բանակի սպայական կոչում և աստիճան, ինչպես և այդ կոչումն ունեցող զինվորական) Գարեգին Տեր-Հարությունյանը՝ Նժդեհը, ով Երևանից Արամ Մանուկյանի պահանջն էր ստացել՝ դիմանալու գոնե երեք օր, քանզի Ղարաբլիխսան գրավելուց հետո թուրքական բանակը Դիլիջան-Սևան-Ախտա գծով կարող էր շրջանցել Երևանը: Այսպես ապստամբած և ի վերջո Թ. Նազարբեկյանի համառությունը կտորած զորքը՝ Գուրգեն Տեր-Մովսիսյանի թնդանոթաձիգների ու Նժդեհի հեծյալ հարյուրյակի առաջնորդությամբ մայիսի 24-ին վերադառնում է Ղարաբլիխա: Սկսվում է ձակատամարտը: Գուրգեն Տեր-Մովսիսյանը հրետակոծում է թշնամու դիրքերը, սակայն նկատելով, որ առաջին գծում պասիվություն է տիրում, թողնում է իր դիրքը, հեծնում ձին և սլանում առաջին գիծ՝ զինվորներին քաջալերելու և հարձակման տանելու, և այդտեղ էլ հերոսաբար զոհվում է...

Ղ ա ր ա ք ի լ ի ս ա յ ի
(Վ ա ն ա ձ ո Ր)
մ ա տ ու յ յ ն եր ու մ
Հայկական կորպուսի և
աշխարհագրոյայիններ
ի մղած անհավասար
ճ ա կ ա տ ա մ ա ր տ ը
տևում է 4 օր՝ մայիսի
25-28-ը, որը թեև ի
վերջո ողբերգական
ավարտ է ունենում,
բայց Հայաստանի
առաջին Հանրապե-



Բաշ-Ապարանի հերոսամարտի հուշահամալիրը

տության ձևավորմանը նախորդած Մայիսյան հերոսամարտերի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում: Այն 1918 թ. Արևելյան Հայաստանի տարածքում տեղի ունեցած երեք ճակատամարտերից (Սարդարապատ, Ղարաքիլիսա, Բաշ-Ապարան) ամենախոշորն ու միաժամանակ ամենահերոսականն է, քանզի հաջողվում է կանխել թուրքերի առաջխաացումը դեպի Երևան և Սարդարապատի ճակատամարտում այդպես էլ համալրում չստացած թշնամուն հաղթելու հող է նախապատրաստում ու փրկում է երկիրը կործանումից: Փաստորեն եթե Գուրգեն Տեր-Մովսիսյանը չընդվզեր գինվորական ղեկավարության որոշման դեմ ու քաջություն չդրսևորեր, գուցե այսօր Հայաստանը գոյություն չունենար:

Ի դեպ, Սարդարապատի, Ղարաքիլիսայի և Բաշ-Ապարանի գոյամարտերը ոչ թե հուսահատության հասած հայության «ինքնաբուխ պոռթկման» կամ «համաժողովրդական պայքարի» արտահայտություն էին, այլ տվյալ դարաշրջանի ազգային ընտրանու՝ Հայկական կորպուսի միջին ու ստորին օղակների սպայության (Պողոս Բեկ-Փիրումյան, Գուրգեն Տեր-Մովսիսյան, գնդապետներ Սիլիկյան, Ղորղանյան և Սամարցյան) ու ՀՅԴ մարտական թևի լավագույն ներկայացուցիչների (Դրաստամատ Կանայան, Գարեգին Նժդեհ, Նանումյան-Ջենյակ) կողմից գիտակցված ինքնագոհության գնալով՝ ժողովրդին արթնացնելու և հերոսացումի առաջնորդելու հետևանք, որը և տալիս է իր արգասիքը:

Պատահական չէ, որ թուրք հրամանատարներից մեկն ասել է.

«Ղարաքիլիսայում հայերն ապացուցեցին, որ կարող են լինել աշխարհի լավագույն գինվորները»:

ԾԱՂԿԵՑ ԾԱՌԸ

Խոսք՝ Յուրի Սահակյանի
Երաժշտ.՝ Թամարա Աբրահամյանի



Ծագ - կեց ծա - ող իճ տրն - կած՝ ան - նր - ման է. ան - նր - ման:
Հա - սակ քա - մին մըշտ - ար - թուն՝ ան - նր - ման է. ան - նր - ման:



Երն - յեզ այ - գին ու - զին - ծաց ան - նր - ման է. ան - նր - ման:
Ո՛ր խր - ճըճ - վեց առ - դար - քում՝



Ա - թե - վր լույս է տա - լու, ան - սր՝ ան - գրե ու - կե - րե.



խկ հակ - քե - րը՝ գե - դե - ցիկ ծըլ - վր - լոց - ներ ու եր - գեր...



խկ հակ - քե - րը՝ գե - դե - ցիկ ծըլ - վր - լոց - ներ ու եր - գեր...

Ու լցվելու է այգին
Ուրախությամբ ծառերի,
Սոսափներով ուղարկված,
Կապույտներին, արևին:



Ապրողներն են շրջելու
Գույներում ու բույրերում,
Հայտնվելու են մրգեր,
Զամբյուղներում, դուլներում

